ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2014 թվականի N 120 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 30ա ՀԱՍՑԵԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԸ <<ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ <<ՓԱՐՈՍ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ <<ԴԵՊԻ ԱՌԱՋ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան խճուղու N 30ա հասցեի նախակրթարանի շենքը (վկայագիր 2271979) 2007 թվականի հոկտեմբերի 19-ի գույքի անհատույց օգտագործման N 2868 պայմանագրի համաձայն տրամադրվել է <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպությանը: Վերջինիս կողմից նպատակային օգտագործվում է շինության երեք մասնաշենքերից մեկը, իսկ մյուս երկուսը չի օգտագործվում:

Միևնույն ժամանակ Ամերիկյան <<Փարոս>> հիմնադրամի նորաստեղծ <<Դեպի առաջ>> բարեգործական հասարակական կազմակերպությունը դիմել է Գյումրու քաղաքապետին՝ բարեգործական ծրագրեր իրականացնելու համար տարածք տրամադրելու խնդրանքով (քաղաքապետարանում մուտքագրված՝ 2014 թվականի սեպտեմբերի 5-ին N8036 թվագրմամբ):

Նկատի ունենալով վերոգրյալը, հիմք ընդունելով նշված պայմանագրի 3.1 կետի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության օգտագործումից հետ վերցնել Երևանյան խճուղու N 30ա հասցեի նախակրթարանի նպատակային չօգտագործվող, Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող երկու մասնաշենքերը՝ անհատույց օգտագործման թողնելով փաստացի օգտագործվող մասնաշենքը, մինչև 2017 թվականի սեպտեմբերի 22-ը:
2. Օգտագործումից հետ վերցված երկու մասնաշենքերը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ամերիկյան <<Փարոս>> հիմնադրամի նորաստեղծ <<Դեպի առաջ>> բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով:
3. Սահմանել, որ նախակրթարանի շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը առանձնացվում է Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից տրված հատակագիծ-սխեմայով:
4. Սահմանված կարգով դադարեցնել <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը, այն լուծել և կնքել նոր պայմանագրեր՝ առանձնացված մասերի համար:

Կողմ (18)	Դեմ (1)	Ձեռնպահ(0)
Ա.Ադամյան	Հ.Խաչատրյան	
Գ.Ադամյան		
Ա.Բաղեյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		
Վ.Եդիգարյան		
Գ.Թաթարյան		

Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Մ.Սահակյան
Տ.Փանոսյան

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

30 սեպտեմբերի 2014թ.
ք.Գյումրի